

Մեր ազնուականաց անարգել արբեցողութիւնն անոնց հետ կը շրջէր ամենուրեք. պատշաճութիւն կամ ակնածութիւն բնաւ անծանօթ են անոցմէ ոմանց : Աշտիշատու հայրապետանոցին մէջ, եւ Ս. Ներսեսի մը ճաշին ինչպէս վարուելու էր Հայր մարդպետի նման բարձր իշխան մը, յայտնի է : Եւ սակայն նա եւս «արբեցաւ սխարակեցաւ», կ'ըսէ պատմիչը, եկեղեցւոյ պետին առջեւ, որ թէ որքան կ'ատէր «զանառակ արբեցութիւնս» լաւ զիտէր (Փաւս. 76) : Եւ ինք՝ որ գնացեր էր բարեմտութեամբ «կալ յաղօթս եւ առնուլ ողջոյն» հայրապետէն, զինւոյն ազգեցութեան ներքեւ բարեկամը թշնամի մը դարձաւ. սկսաւ «ղնել թշնամանս» մեծին Տըրդատայ եւ Արշակունեաց տոհմին, անոր մեռելոց ու կենդանեաց, որ Աշտիշատու զեղեցիկ կալուածներն եկեղեցւոյ շնորհեր էին. եւ սպառնացաւ՝ յարքունիս հասնելուն զբաւել տալ զանոնք (նոյն, 114-5) : Մարդպետը չէր, այլ զինին որ կը բանդագուշէր :

Գ. Արդ՝ այս բոլոր օրինակներս լիովին կը հաստատեն՝ թէ ինչպէս արբեցութիւնն ընդհանուր եւ անհրաժեշտ սովորոյթ մ'էր մեր աւագանւոյն, սկսեալ թագաւորէն, եւ որով կը փայլէին նաեւ